Առուվաճառքի պայմանագիր N ՀՀՌՑ-ՄԱԱՊՁԲ-9/17
/վերելակի պահեստամասերի/

ք.Երևան 09 հունվարի 2018թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Գ. Ալոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը, ի դեմս Ռ. Մանուչարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, որոնք համատեղ հիշատակման դեպքում կանվանվեն «Կողմեր», կնքեցին սույն Պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր» հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան եւ գինը**

1.1. Պայմանագրով Վաճառողը պարտավորվում է Գնորդին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի Հավելված 1-ում նշված ապրանքները (այսուհետ՝ «Ապրանք»), իսկ Գնորդը պարտավորվում է վճարել դրա դիմաց Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:
Պայմանագրի գինը կազմում է 358 500 /երեք հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
1.2. Վաճառվող ապրանքի հաշիվ-ապրանքագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
1.3. Ապրանքների համար վճարումը կատարվում է 100% կանխավճարի ձևով, Գնորդի կողմից հաշիվ-ապրանքագիրը ներկայացնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

**2.Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները**

*2.1. Վաճառողը պարտավորվում է՝*
2.1.1. ապրանքը հանձնել Գնորդին պայմանագրի գումարն իր հաշվեհամարին մուտքագրվելուց հետո 49 /քառասունինը/ օրացուցային օրվա ընթացքում, նախապես տեղեկացնելով Գնորդին ապրանքի փոխանցմանը պատրաստ լինելու մասին,
2.1.2. Գնորդին հանձնված անպատշաճ որակի ապրանքը փոխարինել սույն պայմանագրին համապատասխան որակի ապրանքով Կողմերի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում:

*2.2. Գնորդը իրավունք ունի՝*
Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված չհամապատասխանող ապրանք՝ պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.
*2.3. Գնորդը պարտավորվում է՝*
2.2.1. նախապես վճարել պատվիրված ապրանքի արժեքի չափով սույն պայմանագրի 1.3. կետում նշված կարգով,
2.2.2. ընդունել սույն պայմանագրով նախատեսված ապրանքը:

**3. Կողմերի պատասխանատվությունը**

3.1. Պայմանագրի 1.3 կետով նախատեսված պայմանների խախտման դեպքում Վաճառողն իրավունք ունի Գնորդից պահանջել յուրաքանչյուր ուշացած օրվա համար վճարել տույժ, Վաճառողին վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.01%-ի չափով:
3.2. Ապրանքի հանձնման ժամկետները հինգ օրից ավել խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար Գնորդն իրավունք ունի Վաճառողից պահանջել չհանձնված ապրանքի արժեքի 0.01 %-ի չափով վճարել տույժ:
3.3. Գնորդի կողմից ապրանքների վերջնական ընդունումից հետո Վաճառողը ոչ մի պատասխանատվություն չի կրում Գնորդի նկատմամբ:

**4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)**

4.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագրի կնքումից հետո և որը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**5. Այլ պայմաններ**

5.1. Կողմերի այն փոխհարաբերությունները, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կանոնակարգվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:
5.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և դադարում է պարտավորությունների լրիվ կատարմամբ:
5.3. Պայմանագրում փոփոխություններ եւ լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր ձևով:
5.4. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն միննույն իրավաբանական ուժը:

**6.Կողմերի հասցեները եւ վավերապայմանները**

| Գնորդ | Վաճառող |
|---|---|
| «ՀՀՌՑ» ՓԲԸ | «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | Ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 25 |
| «Յունիբանկ» ԲԲԸ | ՀՎՀՀ 00847479 |
| հ/հ 24100200177400 | հ/հ 2050022093071001 |
| ՀՎՀՀ 01501898 | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Գ. Ալոյան | Ռ. Մանուչարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*09 հունվարի 2018թ. կնքված*
*Թիվ ՀՀՌՑ-ՄԱԱՊՁԲ-9/17պայմանագրի*

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը և ապրանքային նշանը | չափման միավորը | միավոր գինը | գումարը | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հաս-ցեն | քանակը | ժամկետը |
| 1 | Լուսային տվիչի մալուխ Kleemann | հատ | 87 900 | 87900 | ՀՀ,ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | 1 | Մինչև 2018թ, փետրվարի 28-ը |
| 2 | Վերելակի խցիկի ուղղորդիչ ներդիր Kleemann | հատ | 45 100 | 270 600 | | 6 | |
| | *Ընդամենը* | | | *358 500** | | | |

/Երեք հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր/

* հանդիսանում է հարկ չվճարող կազմակերպություն
1. Ապրանքը պետք է ունենա որակի սերտիֆիկատ /եթե կիրառելի է/

**Գնորդ**

«ՀՀՌՑ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Յունիբանկ» ԲԲԸ
h/h 24100200177400
ՀՎՀՀ 01501898

Գ. Ալոյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Վաճառող**

«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 25
ՀՎՀՀ 00847479
h/h 2050022093071001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Ռ. Մանուչարյան
(ստորագրություն)
Կ.Տ